

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 145

Ֆիզիքական վերադարձ ի վերջնական դատաստան եւ փառք – Քրիստոսի բարձրացման չորրորդ եւ վերջին հանգրուանը Նրա վերջին օրումը եղած ֆիզիքական վերադարձն է ի վերջնական դատաստան եւ փառք (Մատթէոս 25:31-34, 41, Յովհաննէս 5:26-29, Գործք Առաքելոց 10:42, 17:30-31, Հռովմայեցիս 2:14-16, Բ. Կորնթացիս 5:10, Բ. Տիմոթէոս 4:1-2, 8, Յակոբոս 5:8-9):

Քրիստոսի վերադարձի բնոյթը – Թէկուզ Քրիստոսի վերադարձի եւ աշխարհի վերջի նիւթերի նկատմամբ կայ շատ հետաքրքրութիւն այսօրերս եկեղեցում, ցաւալիօրէն մեծամասնութեամբ այսպէս նիւթերի այժմեան հասկացողութիւնը հակասութեամբ գրային է՝ ազդած երկու գլխաւոր սխալներից: Առաջին սխալը տնտեսականութիւնն է՝ Քրիստոնէաների միջեւ ընդունւած մի տարածւած տեսանկիւն, որը ուսուցանում է թէ Քրիստոսը կ'վերադառնայ եօթը տարիներ նախքան Իր վերջին գալուստը՝ ճանաչւած որպէս «գաղտնի յափշտակութիւնը», որպէսզի յարուցանէ ուղղարար մեռեալներին եւ յափշտակէ նրանց կենդանի հաւատացեալների հետ միասին՝ այս աշխարհից դուրս տանելով դրանց: Երկրորդ սխալը ճանաչւած է որպէս գեր-անցեալականութիւնը, որը ուսուցանում է թէ Քրիստոսի երկրորդ գալուստը արդէն տեղի ունեցաւ առաջին դարումը՝ տաճարի կործանման եւ Երուսաղէմի անկման միջոցով: Երկու տեսանկիւններն էլ յենուում են մի շարք մարգարէական հատուածների սխալ մեկնաբանութեան վրայ:

Աստուածաշունչը յստակօրէն եւ միմիայն խօսում է Քրիստոսի երկու գալուստների մասին՝ Իր առաջին գալուստը ի ստորացում, եւ Նրա երկրորդ գալուստը ի բարձրացում: Չկայ երրորդ գալուստ (Եբրայեցիս 9:27-28): Քրիստոսի երկրորդ գալուստը մի անձնական, ֆիզիքական եւ տեսանելի եղելութիւն կ'լինի (Գործք Առաքելոց 1:9-11): Երկու հրեշտակները աշակերտներին ասեցին թէ Քրիստոսի վերադարձը անձնական կ'լինի՝ այսինքն նոյն անձը որը նրանցից վերացաւ կ'վերադառնայ. թէ այդ տեսանելի կ'լինի՝ այսինքն ինչպէս նրանք տեսան Նրան հեռանայ, նոյնպէս էլ կ'տեսնեն Նրան վերադառնայ. եւ թէ այդ ֆիզիքական կ'լինի՝ այսինքն ինչպէս Քրիստոսը ֆիզիքապէս երկինք համբարձաւ, նմանապէս Նա ֆիզիքապէս երկնքից կ'իջնի: Այդ մի գաղտնի կամ հոգեւոր վերադարձ չի լինի, այլ մի հանրային եւ ֆիզիքական գալուստ (Ղուկաս 17:24, 21:35, Ա. Թեսաղոնիկեցիս 4:16-17):

Քրիստոսի երկրորդ գալուստը մի փառաւոր եղելութիւն կ'լինի: Իր առաջին գալուստին, Յիսուսը եկաւ Իր ստորացումով, եկաւ յօժարութեամբ մի կողմ դնելով Իր երկնային փառքը, պատիւը, իշխանութիւնը եւ արտօնութիւնները. Նա եկաւ որպէս մի համեստ մանուկ մտորում, աճեց եւ ապրեց ըստ երեւոյթին մի աննկատ կեանք, տառապեց սարսափելիօրէն, եւ մեռաւ մի ծայրայեղ ցաւալի եւ խայտառակ մահ: Սակայն Իր երկրորդ գալուստում, Յիսուսը կ'վերադառնայ Իր փառքովը, վեհութեամբ եւ զօրութեամբ որպէս տիեզերքի Թագաւորը, որպէսզի յայտնի Իր թագաւորութիւնը բոլորին (Մատթէոս 25:31, Մարկոս 8:38, Բ. Թեսաղոնիկեցիս 1:10, Տիտոս 2:11-14, Ա. Պետրոս 4:13): Քրիստոսի երկրորդ գալուստը մի յանկարծակի եւ անակնկալ եղելութիւն կ'լինի, եւ դրա ժամանակը անյայտ բոլորին (Մատթէոս 24:36, 42, 44, Ա. Թեսաղոնիկեցիս 5:2, Բ. Պետրոս 3:10): Քրիստոսի երկրորդ գալուստը մի յաղթական եղելութիւն կ'լինի (Բ. Թեսաղոնիկեցիս 1:7-10, Յայտնութիւն 20:1-15): Յիսուսը կ'գայ որպէս բոլոր յաղթող Թագաւորը, եւ Նա լիովին եւ վերջնականապէս կ'յաղթահարէ Իր բոլոր թշնամիներին (Հռովմայեցիս 8:18-25, Ա. Կորնթացիս 15:24-26, Փիլիպպեցիս 2:9-11):

Քրիստոսի երկրորդ գալուստը մի վերջնական դատաստանի օր կ'լինի: Նա որ տառապեց Իր թշնամիների ձեռքից Իր երկրային կեանքի ընթացքում, կ'վերադառնայ որպէս Դատաւոր՝ դատելու բոլոր մարդկութեան վասն Իր Հօրը (Բ. Տիմոթէոս 4:1, Ա. Պետրոս 4:5): Բոլոր ժամանակների բոլոր մարդիկ յարութիւն կ'առնեն եւ կ'կանգնեն Քրիստոսի ատեանի առջեւ: Քրիստոսի դատաստանը հիմնւած կ'լինի գործերի վրայ, քանի որ մարդիկ հաշիւ կ'տան իրենց ամեն արած բաների համար՝ խորհրդով, խօսքով կամ էլ արարքով (Մատթէոս 12:36, Յովհաննէս 5:28-29, Հռովմայեցիս 2:6-12, 14:12, Յայտնութիւն 20:12, 22:12): Քրիստոսը կ'դատի բոլորին ըստ իրենց Աստուծոց ստացած յայտնութեան հանդէպ եղած պատասխանը (Հռովմայեցիս 1:19-20, 2:12-16):

Այդ մի ահռելի եւ սարսափելի օր կ'լինի անհաւատացեալների համար, որոնք կ'նետուն դժոխք եւ կ'կրեն անվերջանալի տանջանք ու ցաւ՝ մարմնով ու հոգով, առանց որեւէ հանգստեան կամ դադարի (Մատթէոս 10:28, 13:41-42, 25:41): Իսկ հաւատացեալների համար այդ մի փառաւոր օր կ'լինի, որոնց Տէր Յիսուս Քրիստոսի մէջ եղած հաւատքը բացայայտօրէն կ'արդարացի (վաւերացի): Եւ թէպէտ նրանք չեն ստանայ դժոխքի դատապարտումը եւ պատիժը (Հռովմայեցիս 8:1-4), բայց եւ այնպէս նրանք կ'դատուն որպէսզի ստանան յաւիտենական վարձատրութիւն (Ա. Կորնթացիս 3:12-15, 4:5, Բ. Կորնթացիս 5:10): Եւ ապա նրանք կ'առաջնորդեն Աստուծոյ յաւիտենական եւ փառահեղ թագաւորութեան մէջ (Մատթէոս 13:43, 25:34, Հռովմայեցիս 8:17-18, Կողոսացիս 3:4, Յայտնութիւն 21:3-4): Այսպիսով Տէրը վախճանին կ'հասցնի պատմութիւնը, կ'կատարելագործի Իր թագաւորութիւնը, եւ կ'ատարեալ իրագործութեան կ'բերի Աստուծոյ փրկանաւորութեան ամբողջ նպատակներն ու խոստումները: Այս «երանելի յոյս» է, եւ առաքեալի հետ մենք էլ ասում ենք՝ «Ամէն: Եկ, Տէր Յիսուս» (Տիտոս 2:13, Յայտնութիւն 22:20):